

ՆԻԿՈՒ ԱՂԱՅԱՆԻ ՆԱԽԱԿՆԵՐԸ ՀՈՎԷ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Հայ գրական-քննադատական մտքի ակնազարդող դեմքերից մեկին՝ Նիկոլ Աղբալյանին և Հովհ. Թումանյանին մտերմությունը ծնունդ է առել դարասկզբին: Թիֆլիսի Բեհագյանի փողոցի № 50 տան վերնահարկի Թումանյանի հյուրընկալ բնակարանում, ուր 1899—1908 թթ. գործել է «Վերնատունը»՝ հայ գրողների գրական խմբակը բանաստեղծի գլխավորությամբ, հիմնական անդամներից (Ղ. Աղայան, Ավ. Իսահակյան, Լ. Շանթ, Դ. Դեմիրճյան) բացի մըշտապես եղել է նաև Նիկոլ Աղբալյանը: Խմբակի ընթերցումներին, գրույցներին, ասուլիսներին Աղբալյանը մասնակցել է մինչև 1902 թ., որից հետո մեկնել է Պետերբուրգ ուսանելու Պետերբուրգից Թումանյանին հղած նամակներում Աղբալյանը կարոտով ու սիրով է հիշել «Վերնատուն» հետաքրքիր, բազմաբովանդակ հավաքույթները: Այնուհետև, ուսումը շարունակելու նպատակով, Աղբալյանը մեկնել է արտասահման, որտեղից նույնպես գրել է ընկերոջը, պատմել նրան իր տպավորությունները, տեղյակ պահել նոր ծրագրերին ու մտահղացումներին, հաճախ ապավինելով բանաստեղծի խորհուրդներին ու օգնությանը:

Ստորև ընթերցողների ուշադրության ենք ներկայացնում Նիկոլ Աղբալյանի՝ Թումանյանին հասցեագրած նամակները (պահվում են Ս. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, Հովհ. Թումանյանի անձնական ֆոնդում), որոնք ու միայն ուշագրավ տեղեկություններ են պարունակում ժամանակի հասարակական կյանքի զանազան իրադարձությունների մասին, այլև երկու գրական գործիչների ջերմ բարեկամության պերճախոս վավերագրեր են:

Ջ. Ա. ԱՎԵՏՅԱՆ

1

1902, հոկտեմբերի 2
Ս. Պետերբուրգ

Սիրելի Օհանես,

Ինչ խոսք, որ գրում եմ առանց հուսալու, թե պատասխան կստանամ: Գրում եմ նրա համար, որ իմանաս, թե ինչպես է ապրում այստեղ վերնականը: Երգիչ եմ, ժամ եմ ասում, մոմ բռնում, գրական դնում և ստանում եմ ամսական 15 ռ., նաև հուլիսի, որ հունվարից կստանամ 25 ռ.: Ունեմ մի գաս, որից, հավանորեն, կստանամ 15 ռ., գնի մասին չեմ խոսել, ուրեմն 30 ռ., հուլիսի ունեմ ուրիշ դաս գտնելու: Ուղիղ այդքան տալիս եմ սենյակի և ճաշի, մնացածը հոգում եմ իմ խնայած 40 ռ., որից 20-ը արդեն կերել եմ: Այնուամենայնիվ տրամադրությունս լավ է. Դեռ համալսարան չեմ մտել, բայց առանց այդ էլ խիստ կանոնավոր կյանք եմ վարում: Առավոտը 7—8-ին ոտքիս վրա եմ, մարմնամարզություն սենյակիս մեջ՝ մերկ, ապա թեյ-հաց ու պանիր, կարգում եմ որն է ծանր բովանդակության գիրք, հետո գերմաներեն: Ժամը 11-ին գնում եմ գրադարան: Սկզբում կարդում եմ մասթեմատիկայից, կրկնում եմ առաջիկա անցածս, ապա ուսում գեղարվեստի պատմությունը 12 պրակ, ՈՅՈՒՄԻՆ-ու, ողորմելի դիրք ընդհանուր առմամբ, սովորյալ որից կարելի է 2 փոքրիկ հոդված շինել և ամբողջությամբ անուշ լիմ, ապա որն է լրացուցիչ գիրք իմ իմացած բաների վերաբերմամբ: Այս ամիս շատ տարված եմ գեղարվեստով՝ ճարտարապետություն, քանդակադործություն և նկարչություն. և այնպես լավ հասկանում եմ, թվում է ինձ (որովհետև տեսած

բաների մասին ինչ կարողում եմ, տափակ ու անշնորհք են), որ փորձություն ունեմ այդ կարգի գործադառնականներ գրելու, բայց որտե՞ղ: Այստեղ կա «Աղեքսանդր III-ի թանգարան», ի՞նչ բաներ կան ուս առվեստից, կհիանաս: Եվ, ինչպես հասկանում եմ, սի քանի բան մանավանդ: Սակայն առայժմ իկոնների սասին եմ կարողում և իկոններ եմ նայում: Բաներ կան, բարեկամ, որ զգվելի են, կարծես, բայց որ լավ դիտում ես, ճանաչում ես մաքրում, որ ստեղծել ու հղացել է այդ բաները... Շատ տպավորություններ ունեմ, բայց հաղորդել չեմ կարող, խառն են, բուռն ու անկերպարան: Բայց, եթե գրելու լինեմ այդ մասին մի բան, միտք ունեմ նամակների ձևով գրելու և հավանորեն բեղ ուղղած: Այստեղ կա և մի էրմիտաժ, որտեղ կարելի է շատ լավ անցնել ամբողջ գեղարվեստի պատմությունը՝ ծագատուսից մինչև Նվրոպա: Բայց դեռ մանրամասն չեմ նայել: Այս բոլորի մասին կգրեմ, եթե լսեմ, որ նամակս տեղ է հասել...

Այստեղ է Թառայանցը 400 էջից բաղկացած մի շքեղ, պատկերազարդ ու մեծադիր Շիլլերի կյանք է հրատարակում: Լավ բան դուրս կգա հավանորեն, կարդացի առաջին թերթի: Մի թերթի մասին զրույց դարձավ մեր երկուսի և Դուրբախյանի մեջ, որ նույնպես այստեղ է (միասին են ապրում) և շատ բարեններ է անում ձեզ: Հանձնեցին ինձ կազմել ծրագիրը, ես էլ կազմեցի, բայց դրամն է գլխավորն, իհարկե: Ծրագիր կազմելուն որ գա, շատ ավելի լավ ծրագիրներ ունեմ պատրաստ, գլխիս մեջ: Թերթը «Գրախոս» տնտեսով, պիտի լինի կիսամյա, 300 էջ ամեն մեկը. նպատակը՝ զարկ տալ հայ գրականության զարգացմանն ու ծավալմանը: Միջոցներ՝ 1) գնահատել տարվա ընթացքում լույս տեսած բոլոր հայերեն գրքերը. 2) ծանոթացնել հայ աշխարհիկ գրականության անցյալի ու ներկայի հետ. 3) ուսումնասիրել այն բոլոր պայմաններն ու հանգամանքները, որոնք նպաստում կամ արգելում են հայ գրականության զարգացմանն ու ծավալմանը: Օժանդակ միջոցներ. ա) Հրատարակել հայ հին թերթերի բովանդակության ցանկը. բ) Տեղեկություն տալ օտար լեզվով լույս տեսած գրվածքների մասին՝ հայ նոր գրականության վերաբերյալ. նշանակել հայ հեղինակի օտար լեզվով գրած «շխատություն» և քաղել նրա մասին եղած օտար կարծիքները, նշանակել թարգմանությունները, որ լինում են մեր գրականությունից: Բոլոր կետերն աշխատել իրագործելու նաև տաճկահայ գրականության վերաբերմամբ: Այս բոլոր կետերն ավելի մանրամասն բացատրություններ ունեն, բայց երկար կլինեն, որ գրեի: Ի՞նչ կասես: Բայց թե փող է պակասում, չկա: Ի՞նչ էք մտածում դուք, բան-ման ձեռնարկելու եք, թե անցյալ և նախանցյալ տաքվա նման: Ո՞րք է մեր նահապետի՞ք քեֆը, ինչ խոսք, որ առայժմ լավ է: Նրա տված 100 ու. շատ լավ ժամանակ հասավ, մինչև այսօր էլ պետք է դալիս, շատ շնորհակալ եմ: Պատկերս հանել եմ, հարկավոր էր համալսարան մտնելու համար, կուղարկեմ: Արդեն գրել պատրաստել եմ, բայց դեռ փողս առատ չէ. թող մնա: Լսելու եմ բանասիրական բաժնում, առաջին կուրսից, հույս ունեմ, որ մի բանի տարի մնամ: Յուրաքանչյուր տարի ինձ հարկավոր է ունենալ միայն 150 ուրլի, որ կարծում եմ, թե չեմ գտնի: Այն ժամանակ նորից կգամ Թիֆլիս, գործ կգտնեմ, փող կհետաձգեմ և մյուս տարին նորից Ռուսաստան և այսպես շարունակ... Ապրում եմ մենակ, երկու մոտ ծանոթ ունեմ միայն, բայց կա գիրք, սենյակ, հաց և ժամանակ, ուրիշ ոչինչ չեմ ուզում: Դրանից հետո կուզեի մի թարմ խումբ ու թարմ թերթ, որ սրտանց գրես մեկ-մեկ: Շուտով պիտի գնամ, խմբական երգեցողության փորձ կա հայկական երեկույթի համար: Ուսանողներին դեռ լավ չեմ ճանաչում, բայց գաղափարական հոսանք չկա մեջները: Մի քիչ բան են մեր հոգևոր դպրոցից ելածները: Հետո կշարունակեմ, թեյ խմեմ, քնամ:

Շարունակում եմ առանց կարդալու գրածս, բան է՝ թե Դերենիկն այդտեղ լինի, հայտնի չհասցես ու համարիր: Շանթին համարելը նույնպես, եթե հնարավորություն ունես, այսինքն, եթե այդտեղ է: Ասա, որ մեկն եմ (Արասխանյանի ոմն է) նրա բանաստեղծական ժողովածուին անհամբեր սպասողներից: Քեզանից կուզեի նույնպես սպասել, բայց զուր է, անողը չես: Այս տարին էլ առանց Հ. Թումանյանց մնանք: Կարդացի Լևոն Մանվելյանի «Դեպի վերը»՝ մի ժամ առաջ: Լավ նյութ է, մեր ինֆեուրմյուն գրականության երկվորյակներից մեկն է, թեկուզ մի քիչ Դրսեն լինի մեջը, բայց բանաստեղծի ավյուրի թուլության պատճառով, թույլ էլ տպավորություն է անում: Առաջին տպավորությունն է, կան լավ հղացումներ ու հատվածներ: Ինձ միշտ թվում է, որ նա ավելի լավ է երևակայում և խորն է զգում, բայց արտահայտել չի կարողանում: Համենայն դեպս տվածից ավելին կա իր մեջ:

Քո՝ Նիկոլ

<Հ. Գ.> Նամակս այնքան ուշացրի, այսօր 15/IX-ն է, որ դասիս փողն ստացա և կարող եմ ուղարկել պատկերս քեզ ու Նահապետին. եթե այդտեղ է Շանթը, գրիր, որ նրան էլ ուղարկեմ: Շատ բարեւ կնոջդ ու երեխաներիդ երամին:

Մի բառ եմ շինել՝ «գնահատական» = рецензия.

1 Գրող, գրականագետ, թարգմանիչ Սեդրակ Քառայանցի (1862—1916) «Բանաստեղծ-իդեալիստ Շիլեր» աշխատությունը (երկու գրքով) տպագրվել է 1903 թ., Ս. Պետերբուրգում:

2 «Գրախոս» անունով պարբերական, որքան մեզ հայտնի է, այդ տարիներին չի հրատարակվել:

3 «Վերնառան» Նահապետը Պապարոս Աղայանն էր:

4 Լևոն Մանվելյանի (1864—1919) «Դեպի վեր» գրամատիկական պոեմը տպագրվել է 1902 թ.:

2

1902 թ. նոյեմբերի 20

Մ. Պետերբուրգ

Սիրելի Յոհաննես,

Այս երրորդ նամակս եմ գրում, առաջին երկուսը պատռել եմ: Երեք նամակս էլ երեք տարբեր բնակարանից: Իմ նոր հասցեն ցնոր տնօրինությունս այսպես է. С.П.Б., Загородный просп., д. № 10, кв. 11.

Լավ միտդ պահիր, որ անպատվաբեր շփոթությունների տեղիք չտաս: Նամակդ ամսի 3-ին եմ ստացել: Առաջին պատասխանս գրել եմ 4-ին, երկրորդը՝ 6-ին, երրորդն՝ այսօր: Հենց այսօր նամակ ստացանք ես ու Վ. Փափազյանի եղբայրը, որի հետ ապրում եմ, մեր Ավ. Իսահակյանից, որ պատմում է քո նամակից և իմ ամենավերջին Նիկոլայ լինելուցս: Միտք ունի բանաստեղծությունները նորից տպել տալ, այն էլ այստեղ: Ինչպես երևում է միտքը ծուռն է, ուզում է այս կողմերը գալ: Դերենիկից մի նամակ ունեմ՝ բաց: Գրում է, որ պարապում է, բայց ավա՜ղ, դրբեր չունի: Դասական հեղինակներ է ուզում: Ինչո՞ւ քեզ տամ, ոնց որ կասեն, ո՛ւր է: Կարո՞ղ ես այդպիսի մի բան անել, մի տարվա մեջ նա կորցրածը ձեռք կարող է բերել: Նա ուղտի նման բան է, միանգամից կուտի ու հետո կարող է բավական ժամանակ անուտել մնալ: Թառայանցի Շիլերի մասին լսած կլինես: Արժե տարածել այդ գիրքը: Իր շքեղությամբ նա նմանը չունեցող հրատարակություն է Կովկասում, լավ պատկերներ կան, թուղթը լավ, բնագիրը նույնպես, կարծում եմ: Բավական հանդիպում ենք իրար, համարյա ամեն օր: Լավ մարդ է: Կա

ներա մեջ Ղոգի կենդանի» կամ թե ունի «պատկեր աստուծոյ»։ կրօնական, առանց նախապաշարումների, բողոքական՝ գործելու եղանակներով։ Նա գնահատելի և օգտակար ուժ է մեզանում և թվում է, թե ուր մտնում է, կենդանութուն է մտցնում։ Բարոյական հավատարմությունը և հասարակական արթնությունը սթափեցնող ազդեցություն է անում ամենքի վրա։ Այստեղ ձեռնարկում եմ մի «գիտական գրադարան» հրատարակել, «պատմական և գրական» գլխավորապես։ Այսպիսի շարքով. «Եգիպտոս, Փյունիկե, Ասորեստան, Բաբելաստան, Հունաստան, Իրան, Հռոմ, Բյուզանդիա»։ Նրանց պատմությունը, գրականությունը, գեղարվեստը, կրօնը, Իհարկե, թարգմանական, բայց լավ ընտրությամբ, պատկերազարդ և պարզ լեզվով։ Ամեն մեկը մի հատոր 100—300 երես։ Աստված եմ կանչելու շուտով ու գործի կաշելու։ Մի ուրիշ, շատ ավելի հսկայական և մեծ աշխատանք, որ արդեն ձեռնարկել եմ, այդ է. 1) կազմել մեր բոլոր գրքերի ցուցակը, մինչև XIX դարի վերջը, 2) կազմել բոլոր թերթերի նյութերի ցանկը, 3) կազմել բոլոր հատուկ անունների ցանկը մեր նոր գրականության մեջ և այն բոլոր տեղեկությունները, որ կան նրանց մասին։ Այս բոլորը նախապատրաստական աշխատանք է (որ կտեի, ըստ իս, 7—10 տարի), որ անհրաժեշտ է հայոց նոր գրականության պատմությունը գրելու համար։ Սրա համար սենյակ ու հաց է հարկավոր, այսինքն տարեկան 200 ու, ինքս էլ փող կաշխատեմ ու մի կերպ կապրեմ։ Հույս ունեմ, որ չեմ գտնի։ Այն ժամանակ... այդ մասին մի ավ անգամ։ Սպասում եմ նամակիդ։

Համբույրս՝ քո Նիկոլ

<Հ. Գ.> Դեռենիկի 40 ու մասին ես վաղուց բացատրություն եմ գրել, Մոսկվայից կարծեմ, 6 ու ունի հետ ստանալու, 34 ու պարտքի է տրված։

Մի ոտանավոր էի գրել, Աբասթուման որ հասներ նամակս միտք կունենար, հիմի չունի։ Բայց արտագրում եմ, ձեզ զրկած չլինելու համար մի բավականությունից.

Ու երբ հավաքվեք Աբասթումանում,
Դուք չմոռանաք, որ այստեղ մենակ,
Եեղճ վերնականը տիրում է, տրամում
Որպես ընդհանուր մի թռչնակ։

Բարեւ նահապետին ու ձերոնց։ Իմ սիրելի Շանթին համբուրիր և պատկերս տուր։ Հիշեցեք և ինձ յօր ժամ բազմէք ի «Վերնատուն»։ Շանթի մասին մի քիչ բան գրի, շատ եմ կարոտել։

3

<26 դեկտեմբերի, 1902, Պետերբուրգից-Քիֆիս>

Սիրելի Օհանես,

Այցետոմս չունենալու համար բաց նամակով եմ Նոր տարվա շնորհավորություններս ուղարկում Վերնատան սիրելի անդամներիդ և հարգելի Նահապետին։ Յորժամ կազմիս զընթրիս խթման յիշեա և զիս զբազմամեղս։ Սիրելի Շանթին ասա, որ նամակը ստացել եմ և շնորհակալ եմ։ Կպատասխանեմ, ինչպես և քեզ նամակ կգրեմ, երբ որ գլուխս ձեռս ընկնի։ Նոր տարին շնորհավորիր տիկնոջն ու ճուտերիդ։ Գրեք որևէ բան Դեռենիկի մասին, եթե գիտեք։ Ուրիշ ի՞նչ կարելի է գրել մի տոնական ու բաց նամակում։ Բարենք Վահան Փափազյանից։

Համբույրս՝ քո Նիկոլ

1 Վահան Փափազյանը Վրթ. Փափազյանի եղբայրն էր։

Սիրելի Օհանես,

Ով գիտե այնպիսի դրության մեջ ես, որ նամակ գրելն իսկի միտդ չի գալիս, եթե ծովափնում մի կողմը դնենք: Ես էլ նամակ չէի գրի, որովհետև շատ խառնված եմ և նամակ գրելու գլուխ չունեմ, եթե չկարդայի «Մուրճի» 4 №-ը և քո ու Ավետիքի գրածները: Մի անգամ եմ կարդացել և ինձ դուր եկավ գրածդ և այնքան դուր եկավ, որ ահա նստել նամակ եմ գրում: Զգիտեմ արդյոք ինչպես են նայում քո գրածների վրա այդ տեղերի «գրական շրջաններ» ասած տեղերում, արդյո՞ք հասկանում են դրանց մեծ նշանակությունը Պապյանի գրականության համար, թե չէ, բայց ինչ վերաբերում է ինձ, ես ամեն անգամ, երբ այդպիսի բան եմ կարդում, ասում եմ՝ երանի նոր սերունդին, որ մեծանում է այդ տեսակ բաներ կարդալով, որի հիշողության մեջ այդ տեսակ հարազատ պատկերներ ու ավանդություններ են լինելու փոքրուց: Ես մեծացել եմ Աստուածաշունչով ու «Սոս» և «Վարդիթերով», նաև ժամագիրք ու «Պղնձե քաղաք» և թեև դրանք շատ հզոր զենքեր են մի երեխայի գլուխ կազմավորելու համար, բայց գրաբարը շատ բան է փչացրել: Հիմի երեխաները մեծանում են քո և Ավետիքի գրածները կարդալով կամ կարդալու: Այդ ազգային շունչը, այդ հին լեզենդները նոր իմաստով, այդ տարրական գծերը Ֆարուսյի և քիչ, բայց զբոսայգի դույնները մշակելու ժամանակ առած, այնպիսի թանկագին բաներ են, որոնց գինը հասկանալու համար պիտի հեռաստանի (պերսպեկտիվի) զգացում ունենալ, այսինքն պետք է մարդ կարողանա մտքով շարունակել ու ժամանակի խորքը տանել այն, ինչ որ կա ներկայումս: Այդպես եմ նայում, որ քո գրածները ստանում են մեծ նշանակություն, որքան էլ զեղարվեստական այս ու այն պակասություն ունենան: Ամենամեծ երկերը ամբողջ աշխարհի գրականության մեջ նրանք են, որոնք լեզենդների ու հեքիաթների անհատական գանձարանից են առած: Ի՞նչ է մի «Համլետ», մի «Լիր», մի «Փաուստ»։ Եվ մեծագույն գրվածքները իրական գրականությունից նրանք են, որոնք ամենից շատ մոտենում են հեքիաթի, այսինքն պարզ են կազմությամբ, որոշ իրանց գծերով և խորքով իմաստով: Անառակ որդու առակի վրա կարելի է միլիոնավոր վեպեր ու վիպակներ հյուսել, նրա վրա կարող են հանճարներ աշխատել, առանց սակայն նրա բովանդակությունը սպառելու... Սակայն ես ուզում էի մի քիչ ազգային գրականության մասին խոսել: Մեր գրողները, դու ինքդ շատ լավ գիտես, ոչ մի լուրջ պատրաստություն ու զարգացում չունեն, ինչ որ կա, աստծու տվածն է: Հասարակությունը չի ապրում մեծ կամ թեկուզ հենց փոքր գաղափարներով, իդեալներ չունի, բացի իր գոյությունը պաշտպանելի իբր զանգված, մսակույտ և ոչ իբր պատկեր աստուծո, այդ բանը սպանում է մեր հոգի ունեցող գրողներին և նրանցից ամեն մեկը իր ուժերի վրա է հույսը դնում և ինչի կարողանում է հասնել ինքը, այն էլ կարող է տալ մեզ: Իսկ շա՞տ բանի կարելի է հասնել մեր հասարակության մեջ, որտեղ զարթուն հոգի չկա և զարթուններն էլ ննջում են, հոգնած մենակ պահապան մնալուց... Մենակությունը համարձակ է դարձնում մարդուն, բայց և շատ է սպառում ուժերը: Աշխարհը խորապես հասկանալու համար նույնպես ընկերություն-հասարակություն է հարկավոր, ինչպես և առհասարակ քաղաքակրթության առաջ գալու համար այդ անհրաժեշտ պայման էր: Ասելս այն է, որ «ազգային գրականություն» ասած բանը շատ քչերն են հասկանում կամ թե իսկի չեն հասկանում, թեև ամենքն էլ ավել կամ պակաս լսել են նրա մասին, իմացել են, կարդացել են, սովորել են: Այդ բանը խորապես հասկանալու համար պետք է մարդ մի կողմից ամուր կպած լինի իր ազգի բունին, մյուս կողմից սրտով ապրած լինի օտար ոլորտներում, օտար գրականություննե-

րում. ո՛չ մեկը չունի այն հոտը՝ ինչ որ իր ազգայինը, ո՛չ մեկը այն համը, ա՛յն ընտանեկությունը, այն հարազատությունը չունի. Եվ ինչպես ձուկը ջրից դուրս մահվան ձեռքին գալարվում է և կենդանին ածխաթթվուտի մեջ սատկում, այնպես է համարյա սեփական գրականություն չունեցողի հալը. ինչպես մարմնավոր դոյուլթյան համար սեփական հող, սեփական տուն, մի խոսքով՝ հայրենիք է հարկավոր, այնպես էլ մարդու հոգու համար հարկավոր է մի հատուկ, նրան հարմար հոգեկան մթնոլորտ, օդ, որ շնչասպառ չլինի: Խնդիրը այստեղ լեզվական չէ, այդ այբուբենն է, խնդիրը ավելի բարդ է, ավելի նշանավոր է և կարևոր. Ես «Ֆաուստի» մեջ կարող եմ մտնել այնպես, ինչպես գնում եմ ամառանոց, ես «Համլետ» կարդում եմ, երբ ուզում եմ իմ Թաֆ, հայ մթնոլորտից զրոսանքի դուրս գալ, բարձր սարեր բարձրանալ, զով անտառներում շրջել, վեհ ու վեհ ժայռերը հասնել մագլցելով ու կանգնած գլխին լայն ու ընդարձակ հորիզոններ դիտել, երկնքի անհուն կապույտի կամ խավարի միստիկ աչքերը դուղել [^], պատրաստ եմ ոգևորված ասելու՝ Տեր, շինենք այստեղ երեք վրան, մեկը քեզ, մեկը Մովսեսին և մեկը Նդիային, բայց իշնել հարկավոր է խաղվելու և հարություն առնելու համար առ որդիս Իսրայելի, այս դեպքում, առ որդիս Թորգոմա՝ ահա այդ մթնոլորտը պետք է ստեղծել. իմոնցով, իմ ազգի ոգիներով պիտի բարձրանամ տիեզերական ոգիները հասկանալու, իմ ազգի իմաստասերներից պիտի սկսեմ Կանտին հասնելու համար, իմ ազգի գիտությունից՝ համաշխարհային գիտությունը բմբռնելու համար... Մենք թափառում ենք այս աշխարհի անապատում և չունենք մի խորան ինչպես հրեաները, մի ուխտի տապանակ, մի Սինա մարգարենների համար և մի Ավետյաց երկիր գնալու համար, ահա թե ի՞նչ պիտի ստեղծել, և ահա թե ի՞նչ բանի են ծառայում քո գրածները, որոնց համար իբրև հայ և իբրև մարդ շնորհակալ եմ քեզանից, որովհետև մարդասիրությունից դրդված պիտի ամեն արարածի օդ տալ շնչելու, և ձուկին օդ չտալ, ու թռչունին՝ ջրում ապրել ստիպել: «Մուրճը» այդ ուղղության չի ծառայում և չի էլ կարող ծառայել. նրա բոլոր դեկլարները ցավում են, թե ա՛խ, ինչու հայր եվրոպացի չէ և նայած ո՛վ որտեղ է կրթվել, մեկը ցավում է, որ զվեցերացի չէ, մեկը, որ գերմանացի չէ, մյուսը, որ ռուս չէ և այլն: «Մշակը» նույնպես... Ոչ ոք չի մտածում, որ հայը պիտի հայ մնա և ցույց տա իրան աշխարհին ոչ իբր եվրոպացի, այլ իբրև հայ, նա պիտի իր ազգին սնուցանի նարեկտցով ու միջնադարյան երգերով և կլանելով այն, ինչ տվել է ամբողջ մարդկությունը՝ ճշմարտություն, գեղեցկություն և բարին աշխարհում, ասի աշխարհին, թե ինչպես է ինքը հասկանում այդ երրորդությունը:

Տիկնոջն ու երեխաներին բարև: Միքելի Շանթին, որի առաջ ավելի քան մեղավոր եմ նամակ չգրելու համար, համբուրի և իմ մի համբույր ցրվե իրաց նրա նեղությանը, եթե կա: Խառնված եմ, խառնված:

1 Նկատի ունի Հովհ. Թումանյանի «Մասունցի Դավիթը» պոեմի Ա մասը («Մուրճ», 1903, № 2, 3, 4, 5):

«Մուրճ», 1903, № 4-ում Ավետիք Իսահակյանը որևէ բան չի տպագրել: «Եվ վաղո՛ւց, վաղո՛ւց խոր քուն է մըտած...» սկսվածքով բանաստեղծությունը տպագրվել է «Մուրճ», № 5-ում:

Եվ թե մեր Շանթ-Նեոնից
 Ու Դերենիկ—հեռուից*,
 Որ գրել էք մի բաց գիր
 Խրատներով ցանուցիր:
 ...Պավարամած իմ սրտում
 Քանի մի շող կար պայծառ,
 Որ իմ օրերը տրտում
 Դարձնում են հուսալառ.
 Բարեկամներ, ձեզ համար
 Ես դեռ ունեմ զգացում.
 Եվ հեռուսեր իմ հոգում,
 Սեր է շողում շերտարար...
 Երբ որ դժգոհ այս կյանքից
 Մտքիս թևին թռչելով
 Անհունության սահմանքից
 Այք եմ ածում նայելով
 Այս անիմաստ ամբոխին,
 Որ ապրում է այսօրով.
 Սերունդ...սերունդ փտելով
 Դալար բերում այս գնդին.
 Դո՛ւք եք աչքիս երևում,
 Դո՛ւք, աղ Հայոց աշխարհի...
 Ու... Վերնատուն կը կանչեմ,
 Քանի հոգիս կը վառի...

Շարունակել թեև կարելի է, բայց այդ ազատ ասքերը ձեր մտքի համար՝ իմ հոգուս շղթաներ են երևում, վարժ չեմ հանգին ու չափին: Ստացել եմ «Բանաստեղծություններ»¹. շնորհակալ եմ շատ-շատ: Ստանալուն պես մի շնչում կարդացի մինչև գիշերվա ժամը 2-ը: Դուր եկավ ինձ հրատարակությունը, մաքուր ու սիրուն, ճաշակով՝ պատիվ հրատարակողներին: Մի համեմատություն Ավետիքի գրքի հետ... և բավական է, որ կոնտրաստավոր Բաքուն և վայելուչ Թիֆլիսն երևան հայտնապես:

Շատ բան ես փոփոխել, շատ բան ես ուղղել, մանավանդ թե շատ նոր բան կա մեջը: Թարգմանություններն էլ դրսուած են ու հղկած: Մանրամասն քննություն կգրեմ հավանորեն, որովհետև շատ բան ունեմ ասելու, թե քո և մեր Ավույի մասին, և թե հայ բանաստեղծություն՝ ընդհանրապես: Բայց որտե՞ղ գրեմ: Զգիտեմ Արամյանցի որդին բերա՞վ քեզ իմ նամակը, որ ուղարկել էի նրան քեզ հանձնելու և հետո ծանոթանալու: Այնտեղ խնդրում էի, որ «Մուրճում» ինձ համար մի տեղ բաց անես անկախ նյութերի մասին գրելու համար: Կատարյալ ազատություն մտքերիս և մի քիչ էլ փող գրպանիս պայմանադրելով: Հուսով եմ, մի բան կգրես այս մասին: Ուղղածներդ շատ անգամ չափազանց հաշող են: Օրինակ, հիշում եմ, «Համերգում».
 ...Ձայնակցում է ժիր թռչնիկի երգին.

այդ մի շնչին ժ տառը՝ անիմաստ, մանավանդ, անտեղի իրի կողքին դրած ավելի ևս պատկերում է առույգ առավակի աղմուկն ու շունչը կամ թե՛ ժայռը... Իր մոռյալ մտքի ետևից ընկած, փոխանակ առաջվա անհաճ բառի: Այստեղ երկուսն էլ կարող են լինել, երկուսն էլ իմաստավոր են, բայց վերջին բառը ցույց է տալիս այն ընթացքը, որ տարիներին ընթացքի հետ արել է քո հոգին հանգիստ, արևոտ տրամադրությունից դեպի վերջերս երևացող թանձրամած հոգնածությունը, վիշտը: Այդ բանաստեղծությունը, որքան ես եմ հասկանում, թեև դեռ խստորեն չեմ վերլուծած, մի սքանչելի գոհար է մեր բանաս-

* Նոր բառ, հանգի համար թխած=հեացող, դի կուրծքը ցավում է և «Վերնատուն» բարձրանալիս հեռում է:

տեղծություն մեջ, արժանի մեծ արվեստագետի գրչի՝ Պուշկինի, Լերմոն-տովի...

Շուտով կլինի թեղ նվիրած երեկույթը², երևի շատ բան կխոսվի: Կգրեմ ժամանակին:

Դերենիկին գրել էի իր պոեմի՝ համար, որ ուղարկեի Բանբերին, ինչու՞ ուղարկեցի «Մուրճը» տպում է գուցե, այդ ուրիշ: Այս տարիս շատ է խառը՝ Մեր Ավետիքը մի լավ բան ունի ասած:

Սադր չի թողնում, որ հայդուկ դառնամ,

Սուրբ չի թողնում, որ աշուղ դառնամ⁴:

Հիմի իմն է դառնի. դասը չի թողնում, որ գրող դառնամ, գիրը չի թող-նում հացատեր դառնամ... Թե դաս քիչ առնեմ, ես ու տունը անհաց կմնանք, թե շատ եմ առնում, ամեն օր ինձ զգում եմ լիմոնի պես քամված, անընդու-նակ ոչ թե բան գրելու, այլ նույնիսկ մի քիչ կարդալու լուրջ բան կամ ապ-րելու մեծերի հոգում... Ընկնում եմ սպանվածի նման մահճակալիս վրա ու զարմանում, թե այս ինչպես եղավ, որ ես չկարողացա մի 3—4 տարի ուսում առնելու գնալ, իմա՝ հաց ունենալ ապրելու և ուսանելու համար, միայն ուսանելու... Ես միստիկ եմ դառնում, մտածելով այս ամենի վրա և մար-դատյաց: Իսկ այդ շատ վատ է թե՛ իմ հոգու, և թե՛ իմ շրջանի համար: Ժանգոտ հողին մոռալ է տեսնում ամեն բան, և էս այս ճահճից պիտի հոգով կամ երկինք թռչեմ, կամ մեծ մարդկանց հոգով ապրեմ, որ ինքնասպանու-թյուն չգործեմ, ուստի երազներով եմ ապրում, իմ և ուրիշի, մեծ երազա-տեսների...

Քո Նիկոլ

Բարև կնոջդ և երեխաներին, մեր պատվական նահապետին և ուրիշ հարցնողաց, որ ի քաղաքիդ կան բնակյալ:

<Հ. Դ.> Բաղ նամակն այսօր ստացա:

1 Խոսքը «Բանաստեղծություններ», 1903 թ. ժողովածուի մասին է:

2 Հովհ. Թումանյանի ստեղծագործություններին նվիրված երեկույթը Պետերբուրգում տեղի է ունեցել 1904 թ. հունվարի 19-ին, Այն կազմակերպել էին բանաստեղծի մտերիմները՝ Արամ Տեր-Գրիգորյանը և Նիկոլ Աղբալյանը:

3 Նկատի ունի Դ. Դեմիրճյանի «Կյանքի տեսիլը» պոեմը, որ տպագրվել է «Մուրճ», 1904, № 1, էջ 73—98, № 2, էջ 59—83:

4 Ավ. Իսահակյանի «Գողթան քնարը որ ազատության...» պոեմի (ստորագրված Հայ զուսմե, «Գրողակ», Ժնե, 1901, № 1, էջ 4—6) բնաբանն է:

Սադր չի թողնում, որ կտրիճ դառնամ,

Քուրբ չի թողնում, որ դուսան դառնամ:

Աղբալյանը մեջբերումը կատարել է հիշողությամբ:

Սիրելի Օնանես,

Ամսույս 19-ին գլուխ և կամ քեղ նվիրած երեկույթը. կար մոտ 50 մարդ, որ պետք է մեծ թիվ համարես, որովհետև անհնարին է լինում այստեղ թե՛ հավաքվելը, թե՛ տեղ գտնելը: Բանախոսությունը (ռեֆերատ) կազմել էր Արամ Տեր-Գրիգորյանը և, որովհետև նպատակ ունեի ծանոթացնելու եկած-ներին քո դրականության հետ, ինչպես կասեն պոլսեցիք, ուստի երկար էր գրել, որ սակայն չձանձրացրեց ոչ մեկի: Գովածքի ամենամեծ արժանիքն

այն էր, որ շատ հատվածներ էր բերել գրքիցդ. մի խոսքով մի լավ հարասություն:

Ես կարդացի «Շունն ու Կատուն»։ Էն ինչ-որ, դժբախտաբար, այնքան լավ դուրս չեկավ. որքան տանը կարդալիս: Ցրտից կոկորդս մրսել էր և հենց առաջին կարդացածս այդ էր, որ կար: Հետո ձայնս լավացավ: «Այվազովսկու նկարի առաջ» և «Մ-ին»։ այս շորսն անգիր ասացի: Հետո ստիպեցին, որ կարդամ «Անբախտ վաճառականները»։ կարդացի գրքով: Ապա, որ հերթը հասավ խոսելուն, ես էլ խոսեցի քո մասին «Աբյուն-էջերի» հեղինակ Համարարձումյանի¹ հետո, որ նկատողություններ արավ ռեֆերատի մասին ու քեզ Օհաննես Հովհաննիսյանից մի «600 ոտ սանդուղք» ցած համարեց (չակերտած արտահայտությունը մասնավոր խոսակցության մեջ գործածեց): Եվ երկու կողմ ասաց. այն նոր ուղղությունը, որի ներկայացուցիչն եք դու և Ավետիքը՝ «ազգային» և այն զարգացումը, որ նկատվում է քո մեջ, երբ լոռվա նեղ ձորերից բարձրանում ես մինչև Սասունցի Դավիթը (լուս. հորիզոն) և ապա՝ Դեպի Անհունը (հավիտենական խնդիրներ—մահ): Կարծում եմ, որ կարողացանք համոզել, թե «և ի մերումս ազգի գործեցան բազում գործք արութեան» թեև «ածու փոքր եմք յոյժ»...

Այստեղ առաջին անգամ տեսա, թե որքան թշվառ հասարակություն ունենք, դեռ պետք է ձեր իրավունքները պաշտպանենք, որ 30—40 տարեկան մարդիկ եք, իբրև «նոր ուղղություն», մինչդեռ իսկ... տես նորերը արդեն դուրս թափում են: Կարդա «Գերբնական հիվանդությունը»։ Երբեք², այդ մարդը մեծ ապագա ունի և անմահ ուժով է սկսել իր գործը, որքան էլ պակասավոր լեզվի և արվեստի կողմից: Դու միայն համեմատիր նրա և Ավետիքի վերաբերմունքը դեպի սերը: Մեկը փշոված, մյուսն՝ առույգ, և չեմ քաշվում ասելու՝ հզոր... Մինչդեռ քեզ համարում են հրապարակով «ոտանավոր գրող»: Գամառ-Քաթիպայից հետո մարդ չեն ուզում ճանաչել, ուրեմն դեռ կոպով պետք է ձեռք բերեք «բանաստեղծի» իրավունքը, արդեն ծագում են նոր աստղեր: Որքան գործ կա անելու, որքան կարծիքներ խորտակելու, ինքնասիրություն վիրավորելու և գլուխներ դափնեզուրկ անելու, իսկ ես շղթաված եմ այսպես լուռ:

...Մի ոտանավորով շնորհակալություն ուղարկեցի³, ստացա՞ր: Բարև մերոնց:

Նյութալիան. այն երեկո 8 բաժանորդ ճարվեց, որ մեծ թիվ է նույնպես: Երեկոյթը վերջացավ ժամը 11/2-ին, խոսողն այս երկուսս էինք: Իմ առաջարկով հեռագրել որոշեցին: Երևի ստացել ես արդեն⁴:

Քո՝ Նիկոլ

<Հ. Գ.> Շանթին և որ ինչ նմա, կնոջդ, Դերենիկին, եթե այդտեղ է, բարևներ: «Մուրճի» համար մի բան եմ գրում, չսպասելով նամակիդ. «Վլ. Սուրվյուլը ներողամտության մասին», մի շատ ժամանակին հարմար բան, եթե գազանակույ չլինի:

¹ Թորգոմանի, գրականագետ և բանաստեղծ Համարձումյան (1880—1965):

² Արաբիի գերբնական հիվանդությունը ազգագրվել է 1903 թ., Թիֆլիսում:

³ Տե՛ս Ձ 5 նամակի շնորհակալական բովանդակությամբ բանաստեղծությունը:

⁴ Ըստ Քրեմ Ցեք-Գրիգորյանի՝ Քոմանյանին հղած 1904 թ. 30 հունվարի թվակր նամակի, հասցեն թխել գրած լինելու պատճառով հեռագիրը չեղ չի հասել:

Սիրելի Ռեանենս,

Հոգված ուղարկեցի «Մուրճին»։ Տես, գնի մասին խոսել, արդարև

թյամբ, բանգի տառապյալ է ոգի իմ: Վախենում եմ թույլ շտան: Ինչ պիտի լինի իմ օրը: Վալ այն գլխին, որ գրաքննիչից շատ վեր է տեսնում: Եթե այս տալվի, հետևյալ անգամ գրելու եմ «Проблема идеализма» նշանավոր ժողովածուի մասին, որ նոր վերջացրի: Համբույր:

Քո՝ Նիկոլ

<Հ. Գ.> նամակներս ստացած կլինես:

1 Հավանաբար նկատի ունի Ռ. Ջեխովս (գրական գործունեության արժեքավորում) հոգ-վածը («Մուրճ», 1904, № 7, էջ 127—134):

8

<29 նոյեմբերի, 1904>

Ս. Պետերբուրգ

Ու թե՛ն ես,
Իմ Օհաննես,
Հեռացել եմ վերնատանից,
Բայց և այնպես,
Իմ Օհաննես,
Ձեռն կտրվել վերնատանից.
Կյանքս անցավ...
Թախիծ ու ցավ
Ձեզդագնացին ուղիս անել.
Ու հողմնավար
Ես վար ու վար՝
Ձկարացա բեռս տանել...
Կյանքս հոսեց,
Ինձ չխոսեց
Վայելքներից ու հույզներից,
Ու ես տխուր,
Թեև կոտոր
Բախուր եմ արգ և հույսերից:
Կըզտն օրեր,
Քար ու ձորեր
Կըկանաչեն եռանդաղին,
Բայց իմ հոգում...
Ո՛չ նորոգում
Ո՛չ խնդովյուն զվարթաղին:
Ձէի ուղի ոտ գրեմ
Ձեզ այս տեսակ տխուր էջ,
Բայց ի՛նչ անեմ, որ հույզեր
Էլ չեն ծլում սրտիս մեջ:
Մնաս բարև, Օհաննես,
Եվ դո՛ւ, սիրուն իմ Դերեն,
Եվ դու, Շանթիկ, թող մի ժամ
Դարդ ու վիշտս ձեզ դերեն...

Ձեր՝ Նիկոլ

1905 1/24

Ալեքսանդրապոլ

Սիրելի Օհանես,

Գրում եմ պոստում, ուր մուսան հեռու է փախչում: Ուղեցա հանգավոր
նամակ գրեմ, բայց մուսան երևում է չարաճիճի ժպիտով և պահանջում ամե-
նալավ հանգերս՝ բառերս, որ ես հոգապահուստի նման պահում եմ շատ
խորը հիշողությանս գանձարանում: Եցանկայի որ՝ գալիք

Արհավիրքի ահեղ ժամին,
Ամենուրեք հողմ ու ջառաչ,
Վերնատնով՝ ի մի մարմին,
Վստահորեն դիմենք առաջ:

Ոգու լուսով լուսավորենք
Գոռ ամբոխի ուղին նսեմ.
Ու նրա հետ առաջ դիմենք,
Դեպի իդեալ՝ վեհ ու վսեմ...

Քո՛ նիկով

Բարև նահապետին, Շանթերին ու ձերոնց:

1906, նոյեմբերի 20

Լոռան

Սիրելիաց իմոց, որ ՚ի քաղաք Տփղիս.

Ջրանն առաքեալ առ իս հՀաս.
Եւ արդ ժամուս այս վերահաս
Ջպատասխանին առնեմ կամաւ
Ձի յապաղիլ միով ամաւ՝
Ոչ է օրէն բարեկամաց
(Սիծաղեցեք, սակայն, կամաց...)
Ցայտնի լինի եղբարց իմոց
Եւ քերց, որ կան ի վերնատուն,
Ձի Դերենիկ՝ աղայ տիոց
Հալածականն և անտուն՝
Կայ գաղարեալ ի Գեղ Ժոնե
Լա ի Ղաւղանն աստ, շուրջ դինե
Ոչ գտանին ողիք բաղում
(Այս քարս տեղին հանգ չի սաղում...)
...Աստ ընթեռնում դերենի
(Հանգը այստեղ պակսեց էլի)
Արանց իմաստեոց զերկս կարևոր
Ձի տեղեւոյ ասեմ, Մոնտեսքեալ մեծ՝
Ձի տալամբերայ... (էլի մնացի...)
...Թողնեմ լեզուն այս արևորո:

Քանզի ելէ յապաղեցից՝ եղիցի թիւ փրկիլն մերոյ. 1907.

Ուրախ եմ շատ, որ հըլա կաթ
Այդ կապարե կարկուտի տակ,
Ուր որ մտրակ, լաց ու կական
Վեճ ու հիշոց լրագրական
Շուրջ ու վրեն
Դեռ կը տիրեն:

Կիկո. 19—23

Շարունակելու սիրտ չունեմ. մարգարեացել էիք, գրելով թե «գոնե այդ-
տեղ դայիմ կացի, որ չկորսվիս»: Ղայիմ կենալու հնար չկա: Երկու ամիս
է կոպակ չեմ ստացել, ոչ էլ նամակ և արդեն 3 օր է, որ չեմ ճաշում, որով-
հետեւ ճաշարանիս պարտքն արդեն շատացել է: Դրությունս շատ վատ է և
եթե ուղում եք, որ իսկապես ոչ թե ղայիմ կենամ, այլ մի կերպ դիմանամ
մինչև գարուն, որ իմ միակ ցանկությունն է, միանվագ մի 30 ո. գտեք ու
դրկեք, կուզեք պարտք, կուզեք նվեր, օգնություն, օժանդակություն կամ
կանխավճար՝ միևնույն է: Չափի՛ր ճերկրացիների՝ բերանը. գրականության
(ընթացիկ) մասին գրող չունեն. չե՞ն ուղի, որ աշխատակցեմ և ի՞նչ կտան
տողին: Շաբաթը մի բանասիրական, հատկապես այս կողմերի հայ պարբե-
րականների մասին: Գուցե մի թեթև թարգմանություն, բան լինի, բոշշուր
(ոչ վիպական) այս կամ այն նյութի մասին, ուրախությամբ կթարգմանեմ,
եթե վճարի մասին հայտնեն: Դու շատ կլինես զբաղված, սիրելիդ իմ Օհան-
նես, Շանթին ասա, 30 ո. միանվագ, ահա՛ ինչ եմ ուզում, մինչև տեսնենք
մեր օրը ո՛ւր է մթնում: 30 ո. ինձ համար մի իդեալ է դարձել այս վայրկյա-
նին և գիշերները քունս կտրում է: Ինչ անելիքս չգիտեմ: Առանց այն էլ ճար-
պիկի մեկը չէի, հիմա էլ եկել, խաթի մեշն եմ ընկել: Ուրեմն ցտեսություն,
համբույրներ բոլորիդ և 30 ո. ինձ, եթե կամիք զի կեցեց իմ:

Ձեր՝ Նիկոլ

Հ. Գ. Այս նամակը շատ շուտ կդրկեի, բայց սպասում էի փողի, սանտիմ-
ներ հաշվողի համար 25 սանտիմը մեծ բան է. վերջը մտածեցի՝ դրկենք,
կարելի է փող են դրկում: Եվ ահա այն զգացումով եմ գոհում 25 սանտիմը,
ինչպես Աբրահամն Իսահակին: Այս նամակս համարեցեք և Նոր տարվա
նամակ: Բոլորիդ շնորհավոր տարի և տոներ: Չմոռանաք 30 ո.: Հիշեցեք
ինձ ու 30 ո.:

Հասցես.

Route d'Echaliens, Tonnelle, 2.
Cher Granjean
Nicolas Aghbalian

1 Խոսքը հավանաբար «Երկիր» օրաթերթի (Քիֆլիս, 1906/7 թթ. խմբագիր՝ Մինաս Մու-
րադյան) աշխատակիցների մասին է:

Սիրելի Օհանես,

Ավերակ նամակդ ու շինիչ խոստումդ ստացա՛: Սպասեցի, որ բոստոն
տեղ բացվի և ուղարկես 30 ո.: Եթե բռն է, բրե՛ք արգելք կա դեռ, իմ նամակս
յուրյոց տուր, ինչդիս որ ես ոչ նամակով այստեղ մի փոքրիկ վարկ բաց արի
ի՛րա՛շ եկա մինչև այսօր: Կարսից ոչ մի նամակ չեն գրում, ոչ էլ <2 ան-
լիթ> ուղարկում: Հավանորեն կարծելով, թե հնարագետ Եվրոպան միջոց-
ներ է դառն առանց ուտելու՝ ապրելու, և որ մենք լեզվի հետ, հինգ ամիս

հետո սովորում ենք այդ արվեստը: Դեկտեմբերի 19-ից կանոնավոր ապրուստից զուրկ, քաշ եմ գալիս ողորմածությամբ: Ոչ դառնալ կարող եմ, ոչ մնալ: Շտապիր, աստված կսիրես, այլևս սիրտ չմնաց:

Քո՝ Նիկոլ

Բարև Շանթին և այլոց: Նորից խնդրում եմ՝ դրամը ղրկիր, պարտքակոխ և սովակոխ եղա:

1 Հիշատակված նամակը մեզ հայտնի չէ:

12

1907, փետրվար 15
Լոդան

Սիրելի Օհանես,

Այսօր մի նամակ ստացա Կարսից, որով ինձ հայտնում են, թե այլևս ոչինչ չեն ուղարկելու: Խոստացել էին մի տարի ամսական 50 ու ուղարկել (նկատի՛ր, պարտք, որ գալուս պես պիտի վճարել սկսեմ) և ուղարկելով ընդամենը 5 ամիս, դադարեցրին, որովհետև չեն կարող այլևս ուղարկել և ոչ թե չեն ուզում:

Մինչև հունիս այս կողմերը մնալ էի ուզում, որ ամառը գամ այդտեղ, թե չէ այս ձուն-ձմեռն ի՞նչ կարող եմ անել, որ դրամարեք լինի: Անդրամ և բարի գործ շատ կա, գիտեմ, բայց ի՞նչ օգուտ, ուտել և պարտք վճարել է պետք: Որ մտածում եմ, թե այդ բոլորի համար հարկավոր է ընդամենը մի 130 ուրբի և որ այդքանի էլ վարկ չունեմ աշխարհում, ինքս իմ աչքում ընկնում եմ բոլորովին: 130 ու: Թվում է, թե մի ողորմելի գումար է, բայց եկ ու տես, որ ես այստեղ հասկացա միայն, թե ինչ բան է դրամը և վարկը: Աններելի երդում եմ տվել դրամ շահել, դրամ, որ անկախ լինեմ ամենքից և ամուր ման գամ:

Գրողի պսակ,

Թե՛ փողի քսակ:

Փողի քսակ՝ վճռում եմ և ոչ թե գրքի մեջ եմ վճռում, այլ իրականության մեջ՝ 130 ուրբի... Հարյուր երեսուն ասեղի նման ծակում է արժանապատվություն և ինքնասիրությունս: Եթե ինքս ինձ ծաղրելու սովորությունը չունենայի, հիմի դարդից կորել էի:

Իսկ քո երեսուն ուրբին ի՞նչ եղավ: Միակ հույսս այդ 30 ու է, որ սպասում եմ ստանամ: Պարտքերս տամ ու փասա-փուսես քաշեմ այս կողմերից, որ ամեն ինչ գերազանց է փողավորի համար միայն: Մայրահեղ հուսահատության ժամանակ, երբ կարծում էի, թե բանս ըուրդ է, գալու են տանիցս դուրս անեն (արդեն 2 ամիս է չեմ ճաշում, ճաշարանից էլ վախ չունեմ, փառք աստծու), կարծես աստված պատահեցրեց ինձ բժ. Բուդուդյանին, որ գնում էր Փարիզ: Վրաս-գլուխս նայելուց հասկացավ, որ փորս կուշտ չէ և 25 ու տվավ: Ես չեմ մոռանալու այդ հոտառությունը և այդ անսպասելի փրկությունը: Դրանով հնարավորություն ստացա սպասելու քո խոստացած 30 ուրբուն և Կարսից ղրկած մերժումին: Հիմա խնդրեմ շուտով (ի՞նչ շուտով, անմիջապես) ուղարկես այդ 30 ու, որով ոչ թե միայն ես, այլ շորս-հինգ սոված պիտի գլուխ պահենք: Չնչին պարտքերով կապված ենք իրար և բոլորս էլ անկուտի (ինչպես ասում են տաճկահայերը), ստացածս նրանց մեջ պիտի հալվի: Երկար նամակդ էլ չմոռանաս, բայց մանավանդ 30 ու, ումից որ ճարել ես, թող միամիտ լինի, կտամ, դեռ միտք չունեմ մեռնելու, թե որ քաղցից չմեռնեմ:

Բարև Շանթին ու ձերոնց:

Քո՝ Նիկոլ

«Ը. Գ.» Այլ բեղ նամակ, փոխանակ գրականությունից և այլն գրե-
լուց, գրում եմ չորս երես գրամի մասին. չափափութունը սիրելու համար
էլ պետք է կուշտ լինել:

1 Մեջերված տողերը Հովհ. Թումանյանի «Պոետն ու Մուսան» երգիծական պոեմից են:

13

1907, մարտի 20
Լոդան

Սիրելի Օհաննես,

Ստացել եմ 80 ֆր., շատ շնորհակալ եմ, հոգուն վրա հասավ: Ես արգեն-
հույսս կորցրել էի: Հենց որ Կարսի մերժողականն ստացա ու բեղ նամակ
գրեցի, նույն երեկոյան, իմ սովորության համեմատ, ինքս ինձ ծաղրելով
գաղտնությունս փորձեցի գրել: Ահա պտուղը.

«Ներքերգ»

Վերնատան

Նիկողն անցավ արտասահման,

ամա՛ն, ամա՛ն,

Որ սովորի ֆրանսերեն.

հրե՛ն, հրե՛ն.

Ո՛չ շոր ունի, ո՛չ սանաման՝,

ամա՛ն, ամա՛ն,

Մարդ չի ասի՝ թքեմ վրեն.

հրե՛ն, հրե՛ն...

Հետ տվեք օրերն այն թուխպ ու շոյիչ,

Երբ գեռ փող ունեւ աշխարհն երեսին.

Երբ որ ճշմարիտն ու զեղը թովիչ

Իմ անփորձ ու չերմ սիրտը գրեցին:

...եռկալը՝ հաճույք ու խորհելը՝ կյանք,

Եվ վեհ՝ ու բորբեն՝ խմտաւ: Կյանքի,

Երբ սիրում էի արեւունք, տառապանք,

Գովարին ուղին ճիգի ու ջանքի...

Ո՛վ խեղճ տղա, դու մտազրաղ՝

ավա՛ղ, ավա՛ղ,

Մենակ ու մութ՝ արյուն կուլաս

helas! helas**

Այն օրերը... այն վա՛ղ էր, վա՛ղ,

ավա՛ղ, ավա՛ղ.

Հիմա կյանքդ անգույն ու lasse (հոգնած)

helas! helas!

Ուպսեցի ամիս ու կես, փող չկա. ոչ գալ կարող եմ, ոչ մնալ: Պատահաբար
բժ. Բուդուղյանն անցավ Լոդան, պատահաբար փողոցում տեսա, պատահա-

* Հիմա կոշիկ ունեմ, վա՛ղք աստուծո:

** Գրելուց հետո իմացա, որ helas արտասանվում է «հելաս» և ոչ «հելասս». ինչ է նշա-
նակում առանց վարժապետի լեզու սովորել:

բար գլխի ընկավ վիճակս և 25 ու տվավ, որով հնարավորություն ստացա քո շրկածին սպասելու։ Նորից պատրաստվեցի ճամփա ընկնել։ Մի ծանոթ ու բարի տիկնոջից մտածեցի մի 100 ֆր. պարտ առնեմ, տամ պարտքերս ու գամ։ Մինչդեռ մի շաբաթ վճռել չէի կարողանում նրան դիմել (նրանց տանը դասեր եմ ունեցել Պետերբուրգ), ահա մի օր ինքը առաջարկեց ինձ օգնել. առա 100 ֆր. տվի պարտքերիս և նույն օրը ստացա 80 ու, որոշեցի մի 15 օր էլ մնալ։ Երեկ Բուդուլյանից նորից 25 ու ստացա։ Եթե մինչև հունիս ամսական 10—15 ու էլ ստանամ ուրիշ տեղից, երկրորդ սեմեստրն էլ կլսեմ և կես ուսանող կվերադառնամ։ Մտածել եմ տոկալ։ Բայց այս չէ, որ ուղում էի ասել։ Երբ երկար սպասելուց, անախորժություններից և ալլն, նորից սիրտս սևացավ, անմիջապես ծաղրի մի կաթիլ էլ թափեցի սիրտս, ահա՛։

Հ. Թումանյանի նամակի առիթով

Նամակն առավ՝
Մուրհակ դառավ
իբր ձեռին.
Գնաց փնտրեց
Ու շատ խնդրեց
«Մեծերին».
—Մի քանի ոու,
ի սեր Աստու՝
ես մեռա...
Հարկավոր է.
Փողս ուր որ է
Կ'երևա...
Ամիս ու կես
Ապրեց այսպես
Դռնն զուռ:
Մինչև եկավ,
Օրը հասավ.
Բե՛ր ու տո՛ւր...

Թողած գիրք ու թուղթ
Նիկուր պանդուխտ
Միտքը միշտ փողին
«Նալլաթ ստեղծողին»
Կանչեց ու գնաց:
Բայց երբ տեղ հասավ,
Տղերանց տեսավ,
Ըար կտրեց, մնաց:
«Ի՞նչ ես շինում այստեղ, ասին,
Փողդ կ'երթա վաղը տասին»...

Կարծում էի թե բանն այսպես էլ կլինի, ինչն է, ավելի լավ վերջացավ, քան հույս ունեի։ Մինչև հունիս երեկ քաջ կգամ։ Աստված ողորմած է։ Դերե-նիկը ժնկ է։ Կիրակի օրը գնացել էի Քր. Միքայելյանի հիշատակին մի հա-վաքույթ կար։ Գնացել էի, որ խոսեմ նաև իմ ճամփու ծախսի մասին, որոշել էի դալ։ Խեղճ տղան կանոնավոր չի ստանում իր դրամը. երբ դրամը քիչ է և անկանոն, աստված հեռու տանի։ Մինչև հունիս է ստանալու, այնուհետև դադարեցնելու են։ Պատրաստվելու է մանկավարժությունից և ֆրանս. գրա-կանությունից քննություն տալու, տեսնենք ինչ դուրս կգա։

Քաղաքականությունը խեղդել է ամեն բան, գրականությունը մոռացվել է։ Լեզուն դարձրել են շիլա-սիլավ։ Պետք է հոգալ այդ մասին։ Քաղաքակա-

նությունը լավ է, այո՛, բայց գրականությունն էլ պակաս չէ։ Մի՞թե չեն մտածում որևէ ամսագիր հիմնել։ Հո չի կարելի «Մուրճի» արով մնալ։ Հապա ինչպես պետք է միտք մշակել, կրթել, նոր աշխարհայացքի հիմքերը գնել, գիտություն տարածել և կենսական խնդիրները լրջորեն քննել ու հիմնորեն հետադուտել։ Կրթերը հուզելով չի կարելի գոհանալ, թեև այդ էլ հարկավոր է։ Բնթացիկ կյանքն իր ազդածներն ունի։

Քո նամակը, որ մեծ հաճությամբ կարդացի, ինձ ուրախացրեց։ Եթե իսկապես հայոց նոր գրականության դասեր տան ինձ, ամենալավ վիճակում գրված կլինեմ, այն է՝ հացը գտնել սիրած պարապմունքով։ Դրան կարելի էր կցել Տեսություն գրականության, որ իմ կարծիքով կարելի էր ամենահետադարձական առարկան դարձնել՝ չոր ու ցամաք սահմանումների տեղ, սովորեցնելով աշակերտներին բանաստեղծական ու վիպական երկեր կարդալ ու վայելել։ Ուրիշ խոսքով, կիրթ ճաշակի տեր նոր հասարակություն պատրաստել, նոր միջավայր ե դրանով հնարավոր դարձնել նոր ու կատարյալ գրականության աշխարհ դալը։ Ասա տեսնենք, եթե գրական բան գրելու լինեմ «Մուրճումը» կարելի է տպել։ Գողով, հա՛, Առանց փողի ո՛չ մի տող։ Մենք էլ բանվոր ենք, այն էլ պարտքակոխ։ պարտքի դեմ հողված չի կարելի տալ, դիտես։

Քո՛ Նիկոլ

<Հ. Գ.> Սիրելի Նահապետին, Շանթին և «քերց իմոց» ու այլոց շատ րարեններ։

14

1907, VI/11 Փարիզ

Սիրելի Օհաննես,

Մի չորս օր առաջ եմ ստացել նամակդ¹։ Ինժեներ հատիսյանի նամակի հետ։ Նրան անմիջապես դրեցի։ Անորոշ նամակ էր, առանց հրատարակչի և խմբագրի հարաբերությունը որոշելու։ Նամակներն ու ձեռքս անցան, որովհետև ամիսուկես է Փարիզ եմ։ Երեք շաբաթից ետ եմ դառնում Զվիցերիա, այնտեղից Կովկաս, քանզի ցամաքեցան աղբյուրը դրամաց։ Ինչ գրեմ։ Լավ քաղաք է, բայց լավն այն է, որ դամ ու պատմեմ։ Շիրվանզադեին երկու անգամ տեսա, նույնն է, այսքանը բավական է կարծեմ։ Ուրիշ ոչ ոքի չեմ տեսել և չեմ ուզում տեսնել, սիրտ չկա։ «Հայրենիքի»² խմբագիր հրավիրեցին Ամերիկա, եկան, որ տանեն, չհամաձայնեցի։ Եթե մյուս տարի մի հնար չգտա, որ դամ կիսատ ուսումնառեմ, որ հետո էլ քննություն տամ ու «մարդ» դառնամ, դնալու եմ Ամերիկա։ Նրանից լավը չկար։ Երկու տարի կմնամ, հետո աստված ողորմած է։ Իսկ թե այդտեղ մի հարմար գործ գտնեմ, կմնամ։ ասում ես գործը կա, շատ լավ, գալիս ինձանից։

Խմբագրական գործը պետք է, որ դժվար լինի, հր՛, ամեն օր թերթ հասցընելի մի անտանիկ բան է։ Մարդ գլուխը կկորցնի։ Թեև во всему человек привыкает։ Այս որ ասում եմ, իմ օրն եմ լալիս։ Խամ եղան պես քանի տարի է ժուռ եմ դալիս սար ու ձոր, շուտով լժկան կդառնամ։ Ֆրանսիական գրականություն և պատմություն՝ ահա իմ պարապմունքը, մինչև այսօր խավարի մեջ էինք։ Ինչ երևելի գրականություն ունեն, որ իմանաս։ Մենք շարունակ ռուս ու գերման գրականության ազդեցության տակ ենք եղել։ Իսկապես ռուս գրականություն։ Գերմանականից՝ Շիլլեր, Գյոթե, Հեյնե, անգլիականից էլ Շեքսպիր, Բայրոն, Իսկ ֆրանսականից ոչ ոք, այսպիսի մի գրականություն անծանոթ թողնել և անգետ մնալ նրա գաղափարներին ու գրածներին՝ հանցանք է։ Հուսով եմ, որ այդ պակասը լրացնել կարողանամ։ Ֆրանսերեն հասկանում եմ լավական։ Գրել-խոսել, աստված տա։ Ինչքան լավ-լավ գրքեր են ծախում և ո՛րքան աժան, մարդ փող չունի, թե առնի, ի՞նչ պատկերներ,

քարտեր: Դու, որ այստեղ լինեիր, ամիսը 1000 ո. քեզ բավական չէր լինի: Տեսածդ կառնեիր. որքան քու աչքի ու սրտի բան կա: Լավն այն է այստեղ չես, թե չէ տասերորդի³ բանը վատ կլինիր: Շանթն Իսսեն՝ eh bien: Թող այդպես լինի, Վերնատան բառարանը փոխեցեք: Ուրախ եմ հաջողության համար, ո՞նց է, լավ է, և մանկունս քանի՞, երկուս: Զավույին բարեններ: Իր լողանը շատ լավ տեղ է ճշմարիտ: Երանի նրան, ով իր 18—27 տարին այն երկրում է ապրել: Մենք եկանք և ամեն ինչ թողնած տեսանք: Ամենաժանոտ միտքը, որ գլուխս է գալիս, միշտ այն է, թե կան բաներ, որ այլևս ետ չեն գա, կանչես՝ չեն դառնա...: Մեր նահապետն ինչպե՞ս է. այդ ժխտորի մեջ երևի այնպես է զգում, ինչպես մեկը խոջի բաղնսում. իր պարզ խելքով նայում ու զարմանում է, թե ի՞նչ են իրար միս գզում, գրազ կգամ, որ դաշնակցական չէ և ամեն օր հետդ վիճում է. իմ սրտագին բարենները և որդիական հարգանքս:

Գուցե մի բան գրեմ, այն էլ ասում են թերթը՝ դադարեցրել են: Մամուլի ազատություն չի տեսնի Ռուսաստանը. նրա համար օտար է, կարծես, ազատությունը. շատ են խոսում ազատության մասին, ուրեմն շունեն: Սուտ է, ոչ մի երկիր այնպես ազատ չէ, ինչպես Անգլիան: Ծգիպտոս տեսա: Ամիսուկես է քաղաքն եմ ման գալիս. թանգարանները իմ զայդի. գիտես էլի՝ ծանր, մանրամասն, ամեն ծակ ու ծուկ, կոտրած աման ու քար նայելով: Քարտեզն առած մտնում եմ բոլոր փողոցները, նայում խանութները, արձաններն ու շենքերը, այգիները, քաղաքի շուրջն ու ներսը չեմ տեսնում (ձեռագրի այս թերթի ստորին ձախ անկյունը պատռված է և այդ պատճառով 5—6 տող հնարավոր չէ վերականգնել—Ջ. Ա.), որ հռչակ է ստանում (հոգեբան, փիլիսոփա, արվեստագետ—էսթետիկ + ու): Մի քանի ուրիշներ էլ լսեցի, բայց ոչ տեական: Այս քաղաքում պարապել դժվար է, աղմուկ շատ կա, թեև մարդ կարող է վարժվել: Ուրիշ ի՞նչ գրեմ այս անկապ նամակս վերջացնելու համար: Լիպարիտ Նազարյանին⁵ իմ բարենները. ո՞նց է, ո՞նց. կնոջդ շնորհակալությամբ, հա՛, Վարդազարյանցի⁶ հետ էի մարտ և ապրիլ ամիսները՝ Լողան: Հիմա Լողանից մի քիչ հեռացել են. ինչի՞ մի նամակ չես գրում մարդուն, հո գիտես, որ կուրախանա: Փուլրն⁷ էլ հետն է: Հասցեն այս է.

Glion S/Territet (Vaud) Hôtel „Alpis Vaudois“—

Швейцария.

մինչև հունիս 30-ը հասցես.

Rue Saint-Zonis en l'île, 75.

Paris Франция.

1 Հիշատակված նամակը մեզ հայտնի չէ:

2 Նկատի ունի «Հայրենիք», Բոստոն (1899—1930 շաբաթթերթը, հետագայում՝ երկօրյա, ապա՝ օրաթերթ):

3 Ակնարկը վերաբերում է բանաստեղծի տասներորդ երեխային՝ Թամար Թումանյանին (1907—1989):

4 1907 թ. Թիֆլիսում կարճ ժամանակով հրատարակվել են մի շարք պարբերականներ՝ «Ժամանակ», «Փայլակ», «Ժայռ», «Երրորդ», «Արարի», «Երկիր» և այլն, որոնք դադարեցվել են կառավարության կողմից իրենց «վնասակար ուղղության» համար: Թե հատկապես «Երրորդ» թերթի ունի Աղբալյանը, դժվարանում ենք ասել:

5 Գրող, գրականագետ:

6 Խոսքը վերաբերում է բանաստեղծի տաղանդի շերտ երկրպագու և մտերիմ բարեկամ՝ Փիլիպոս Վարդազարյանին:

7 Մարուսյա Վարդազարյան:

15

1907, 20¹ դեկտ.
Ալեքսանդրիա

Սիրելի Օհաննես,

Կզարմանաս, որ մինչև այսօր բան չեմ գրել քեզ կամ Ավոյին, կամ Շանթին, սիրտ չկար։ Բանտարկյալի պես ու առանց հավեսի նստած եմ այս հիմար երկրում երազելով միշտ կամ Կովկաս, կամ արտասահման։ Ծշմարիտն ասեմ, եթե նամակս գրելու մոտավոր առիթը չլիներ, երևի նոր տարուն մի բարտ ղրկելով կգոհանայի։ Թեև հոգի առավել է քան զմարմին, բայց նախ մարմնի մասին։

Անցյալ աարի ղրկածս հոգվածի վարձը գրել էիր թե՛ եթե կուզես. ղրկեմ։ Հուսալով. թե մի քանի օրեն պիտի դամ ձեզ մոտ, մտածեցի, թե կերթամ այնտեղ, ինչս կստանամ։ Գալս չկողավ։ Հիմա մեր տունը երևակայում եմ այս ձյուն-ձմեռը, այս հացի թանկության տարին։ Կխնդրեմ առնես այդ դրամը և տաս այս նամակը բերողին, որ կամ քրոջս աղջիկն է լինելու, կամ տղան։ Մրպեսդի չձգձգեն (հավատս կորել է դեպի ամեն մարդ ու հիմնարկություն), ասա նրանց իմ նեղ վիճակը, որ վերջապես ես էլ մարդ եմ և պարտականություն ունեմ դեպի իմ ծնողները։ Բող անմիջապես տան, թեկուզ մի քիչ էլ պակաս։ Սիմեոն Հակոբյան կար, կճանաչես երևի, նրա երեսը բավական պինդ է այս տեսակ բաներում, նրան ասա իմ կողմից, որ մի քիչ աշխատեմ և շուտով առնեմ դրամն ու տա մերոնց։ Զմե՞ռ և հացի գրվանքան 5 կոպ.։ Մտածելիս՝ սոսկում եմ։

Ուրիշ. դուք ինչպե՞ս եք, ի՞նչ եք անում։ Ով գիտե ինչ փոփոխություններ են ձեռք մեր կյանքում, որի թույլ արձագանքն է հասնում այստեղ երբեմն-երբեմն։ Ինչ որ «Դեղարվեստ» թերթի՝ հայտարարություն կարդացի, ի՞նչ բան է... Ինչու՞ համար մի ամսագիր չեք հրատարակում, փառք աստծու, մեյդանը բաց է, ո՞ւմ եք սպասում։ Այսպես օրագրելով և լրագրելով մարդ կգոհակա՞նա։ Պետք է մտածել այս մասին և լրջորեն։ Շանթին հակառակ են երեւում մերոնք, միտթարիւր, թեև վշտացող պտուղ չէ։ Զավոյին բարեկեցի, կնոջը նույնպես։ Մի՞ք մոռանալ Դերենիկին, եթե հնար եղավ, մի քանի ֆրանկ հասցրեք։ Աղբալյանը մի՞նչ է։ Ավոն կարծեմ նոր սիրահարություն է սկսել։ Գրածը վկայեց. բոնիքը կարդացի, լավ են։ Խեղճ Պոռոյան, մեռավ հե՞ն։

Համբույր՝ քո Նիկոլ

Alexandrie (Egyppte)
Poste Francaise, B. P. 240.

1 «Գեղարվեստ» անունով թերթ մեզ հայտնի չէ. ըստ երևույթին Աղբալյանը նկատի ունի «Դեղարվեստ» գրական-արվեստագիտական-երաժշտական պատկերադարձ հունդեսը (Թիֆլիս, 1908—1921 թթ., խմբագիր՝ Դարեգին Լեոնյան)։

2 Պարզ Պոռոյանը վախճանվել է 1907 թ. նոյեմբերի 23-ին, Բաքվում։ Խաղված է Թիֆլիսի երգիչների դերերգմանատանը։

16

1908, հունվար 31
Դահիբե

Սիրելի Օհաննես,

Հուսով եմ, որ այս նամակն ուշադրությամբ կարդալուց հետո ամեն կերպ կաշխատես խնդիրս կատարել կամ կատարել տալ որևէ հարմար անձի

միջոցով: Թե ինչու և ինչպես մնացի այստեղ, փոխանակ հիմա ձեզ մոտ լինելու, երկար պատմություն է: Հիմա, որ մնացել եմ, մտածեցի մի տարվա միջոց էլ գտնեմ և գնամ նորից լողան, քննություն տաս ու գամ նստեմ Կովկաս, այլևս լթափառելու պայմանով, բավական էր: Քեզանից կամ ծանոթներիցս դրամ չեմ ուզում, ահա թե ի՞նչ է ուզածս:

Թիֆլիսի առաջնորդից, որ չգիտեմ իսկ, թե ով է, մի նամակ ձեռք բեր վսեմապատիվ Պողոս փաշա Նուբարի անունով, որի մեջ նա խնդրեց ինձ մի տարով օգնել կիսատ մնացած ուսումս ավարտելու համար: Թող նամակի մեջ հիշվի, որ ես ուսահայ եմ, ավարտել եմ Ներսիսյան դպրոցը, եղած եմ Գեվորգյան ճեմարանում, եթե կուզեք նաև, որ գրական նախափորձեր ունեմ (ականջդ կանչի Ա. Արասխանյան), որ ինձ մնացել է մի տարվա ուսում, որպեսզի կարողանամ քննություն տալ, որ Կովկասի ծանր պայմանները անհնարին են դարձնում ինձ օգնելը, գործի շարունակությունը Կովկասից և, որ հույս ունի, թե վսեմ. փաշան չի մերժի իր առաջարկը: Չպետք է հիշել, որ ես ծգիպտոս եմ, ապա թե ոչ դաշնակցության երեսից երկրս չի հաջողիլ այս գործը: Նամակը պետք է կնքված լինի առաջնորդի ձեռքով, որովհետև կարող է խաչագողական գործ նկատվել:

Այս ձևով կարծում եմ թե կհաջողվի իմ բանը, գոնե այսպես է խորհուրդ տվել մեր լոռեցի Ա. Լալայանին ղոք. Տաղավարյանը, որ փաշայի մոտ անձնավորություն է: Նա ասել է, որ եթե այստեղից դիմվի, կիմացվի իմ ով լինելը և գործը կվիժե, իսկ եթե Կովկասից, այն էլ առաջնորդից լինի գրությունը, մեծ հույս կա, որ կարգադրվի հաջողությամբ:

Ինչպես տեսնում ես, խնդրածս մեծ բան չէ. կամ տեր-Օհանեսի կամ որևէ տեր N-ի միջոցով, կամ անձամբ, եթե ճանաչում ես առաջնորդին, կարող ես ձեռաց հաջողացնել այս թուղթի գործը: Թուղթը խմբագրել կարող ես ամենալավ ձևով: Քեզ տեսնեմ, աշխատիր, այս հիմար երկրից ինձ գցել մի խելքի երկիր, ուր մի տարի կարող եմ սիրածս գրականության, պատմության և իմաստասիրության նվիրել ինձ: Այնուհետև... ի՞նչ ծրագրերն եր ունեմ գրելուս մեջ:

Այս խնդրոս պետք է աշխատես շուտով կատարել. նամակը պետք է կնքված լինի: Ահա երկու կարևոր բան, որ ընդգծեցի: Շուտով մի կնքված նամակ հիշածս հասցեին: Առաջնորդի նամակը ուղղված փաշային: Մարած և վրան հայերեն գրած կնեբիական մի ուրիշ ծրարի մեջ և կուղարկես այս հասցեով:

Mr A. Lalayan, Bureau Mantachoff, Le Caire (Egypte).

Անձամբ ինձ գրելիք նամակդ ուղարկիր այս հասցեով.

Mr N. Aghbalian, Poste Francaise, B. P. 240. Alexandrie, (Egypte).

Չմոռանաս գրել ինձ, որ առաջնորդի նամակը ուղարկեցիր Լալայանին: Առաջնորդի նամակը Լալայանին ուղարկելիս ծրարը ЗАКАЗНОЕ կանես, հա՛. իմ նամակը կարող է պարզ լինել, նույնիսկ մի բաց նամակ:

Ահա ամեն ինչ մանրամասն գրեցի, այսուհետև մեղքովարձքը քո վզին, եթե չաշխատես այս գործը հաջողցնել: Հորս մահից հետո, որ միայն երկու օր առաջ իմացա, կատարելապես որք եմ զգում ինքս ինձ: Այլևս ուրիշ կապ չունեմ այս աշխարհում, բացի ընկերներս: Կարող եմ հանգիստ նվիրվել գրականության և շարսել այդ սիրո հետևանքներից: Աջակցիր ինձ այս նեղության մեջ և մի ծուլանա կատարել խնդիրս:

Քո՝ Նիկոլ

P. S. Սիրելիս, մի՞թե իրավ դժվար է «Վտակի»¹ խմբագրությունից առնել իմ հոգվածիս վարձը: Չէ՞ որ դու գրել էիր իմ նեղ օրերին լողան, թե կուզես, որ ուղարկենք: Ես էլ մտածեցի, թե մի քանի օրից հետո Կովկաս եմ

լինելու, երբ գնամ՝ կստանամ այդ դրամը և մի քանի օր կապրեմ, մինչև որ գործ գտնեմ: Հիմա որ ինքս եմ ուզում դրամը, ինչո՞ւ պիտի դժվար լինի ստանալը: Ճիշտ է, «ի՞նչ հաշիվ է», բայց վերջապես հաշիվ է: Այդ դրամը ուղիվ էի հորս համար, առանց իմանալու, թե ժերոմին ննջում է արդեն սև հողի տակ: Հիմա, որ նա չկա, այդ դրամով կարող ես պարտքերս վճարել: Այսինքն նախ՝ քեզանից ստացած 30 ու., որքան էլ ընկերական օգնություն, բայց և այնպես ես հոգուս պարտքն եմ համարել այդ 30 ու.: Եթե ընկերները չեմ ու չում անեն, այն ժամանակ ա՛հա մի լավ առիթ. դուք այդ դրամը հաշվեցեք իմ ձեռքում 30 ու. պարտքի դեմ և վրան էլ մի քանի ուրիշ ավելացնելով ու մի կլոր գումար դարձնելով, ուղարկեցեք մեր սիրելի և խեղճ Պերենիկին, որ տառապում է ցրտից ու քաղցից ժնկում: Սրանից լավ բան չի լինի: Այդ գումարը այդպես կարող է «օգնության դումար» մնալ: Եթե «վաճակի» խմբագրությունը բարի լինի (ասում եմ, բարի լինի, որովհետև ոչ մեկ պայման դրած եմ գրել սկսելու ժամանակ) իմ Եգիպտոսից գրած թղթակցությունները վարձատրելու ընթացիկ գնով, այն ժամանակ այդ դրամն էլ առեք և ձեր պարտքի դեմ հաշվելով՝ Պերենիկին ուղարկեցեք: Ես իմ հոգածու տպած չեմ տեսել, բայց հաշվելով ձեռագիրը, պետք է, որ 12 ու. ավել պահանջ ունենամ խմբագրության վրա: Սիրելիս, այնքան մոռացկոտ չես լինի, որ ինձ դրած նամակի մեջ կհիշատակես, թե որքան դրամ առար հոգածիս համար, որով և կիմանամ, թե դեռ էլի որքան պիտի վճարեմ, որ 30 ու. լրանա:

Ուրեմն, սիրելի Օհանես, նախ մի նամակ առաջնորդից շուտով, կընձօնեմ, հասցրու կալանին իմ գործի համար և երկրորդ՝ խմբագրությունից առ ինձ հասնելիք դրամը և, եթե չես ուզի իմ պարտքի դեմ հաշվել, ուղարկիր Պերենիկին քո կողմից:

Բառեններ Ս. Հակոբյանին, Ավույին, Նահապետին և Շանթին: Տիկնոջդ ու երեխաներին բարեկ շմոռանաս, ինչպես նաև Զավույին:

Քո՝ Նիկոլ

1 «Վտակ» Երաթուրթ, Թիֆլիս, 1907/8 թթ.:

Սիրելի Օհանես,

Կի՛նս դրել էր, որ արդեն Թիֆլիս ես եկել: Ուրախ եմ, որ աղատվեցիր անհիմն դատապարտությունից¹, և գրականությունը նորից քեզ ունի իր մոտ: Ես լիովին համոզված էի, որ դու արդարացած դուրս կգաս, նկատի ունենալով՝ որ քո գործերը հայտնի էին երկրի փոքր ու մեծ կառավարիչներին և րնդղւմ չէին նրանց:

Ինչե՛կ Երկար լռությունս խցելու երկրորդ պատճառն այն է, որ ուղում եմ թողնել Թեհրանը, ուր ես ինձ լիովին մեկնակ եմ զգում: Կի՛նս՝ երեսայիս հետ, աբդեն մի տարի է եկել է Կովկաս՝ Բառու և ոչ մի սլավոնով համաձայն չէ դառնալ Թեհրան: Ինքս, թեև մի ոռոշ գիրք ունեմ ալստեղ և բավաբար ռոճեկ, բայց մտավորական շրջաններից ու գրականությունից հեռու մնալը այլևս սնտանելի է դարձել ինձ համար: Ես ուղում եմ հաստատվել Թիֆլիս: Ինձ հարկավոր է ոտքի մի կոլումն, որ հետո կարողանամ իմ անելիքը որոշել: Այստեղ ես ոչ մի խնայողություն չեմ արել և անկարելի է անել: Իմ միտքս այն է, որ գոնե կես տարվա ապրուստ ապահովեի, որ հանգիստ կարողանալի նոր գործ որոնել: Բոլոր հաշիվներս սխալ դուրս եկան: Թիֆլիս

հասնելով՝ ես մնալու եմ անապահով և անգործ: Քեզ դիմելուս միտքն այն է, որ ինձ շուտափույթ մի նամակ գրես, թե կարող եմ որևէ պաշտոն հուսալ Ներսիսյան կամ Հովնանյան դպրոցում, կամ այնպիսի մի գործի հուս ունենալ, որ մոտ է գրականության: Խմբագրատուն, նոր թերթ: Հրատարակչական և այլն: Կրկնում եմ, ինձ հարկավոր է մի կովան, մնացածը. հուսով եմ, կգա ինքն իրան:

Խնդրում եմ, հանուն մեր երկարամյա բարեկամության, տեսնես Ներսիսյան կամ Հովնանյան դպրոցում որևէ տեղ կա՞ ինձ համա՞ջ կամ որևէ ուրիշ գործ, որ կարողանամ հանձն առնել սեպտեմբերից: Այս ամենը պետք է մի քիչ շուտ անես: Խոսիր նաև Դերենիկին (կարող եմ ուսուցանել հայոց լեզուն՝ հին ու նոր) և ինձ մի շուտափույթ պատասխան գրի: Ես այստեղ եմ մինչև հունիս 6—7-ը. նամակը գալիս է Թիֆլիսից 7 օրում: Ես չեմ կարող ընտանիքից հեռու ապրել: Այս տարին արդեն ինձ դաս եղավ: Թեև իմ դիրքն այստեղ շատ պատվավոր է և շատ ամուր, բայց ընտանեկան և հոգեկան պատճառներով՝ ես ստիպված եմ թողնելու տեղս:

Վստահ, որ չես թերանա այս ընկերական աջակցության գործում. սպանում եմ քո նամակին:

Համբույր՝ բո Նիկոլ

Հասցես.

Ecole Arménienne
Teheran.

Քարեններ ձերոնց:

1 Այսպես կոչված «Դաշնակցության գործը» սկսվել է 1908 թ. վերջերին: Այդ թվականի դեկտեմբերի 24-ին ձերբակալվել են Թումանյանն ու նրա ավագ որդի Մուշեղը: Վերջինս շուտով ազատվել է: 1910 թ. հունվարին գրավականով ազատ է արձակվել նաև Թումանյանը, սակայն 1911 թ. նոյեմբերին կրկին ձերբակալվել է: Դատավարությանը յոթը է ունեցել Պետերբուրգում, 1912 թ. հունվար-մարտ ամիսներին: 28 մեղադրյալներից տաժանակրության են դատապարտվել 4-ը, մնացածները, այդ թվում և Թումանյանը, ճանաչվել են անպարտ:

Սիրելի Օհանես,

Այսօր մի նամակ գրեցի «Հորիզոնին» Արշակի հասցեով և դրի իմ պայմանները, որ սրանք են.

1. Խմբագրելու եմ լրագրի բանասիրական բաժինը և վարելու եմ այդ առիթով եղած գրագրությունը, որի համար վճարելու են ինձ ամսական 50 ռուբլի:

2. Ամեն ամիս պարտավոր են առնվազն 50 ռուբլու հոդված տպել իմ գրած (առաջնորդող և գրախոսություն) հաշվելով տողը 3 կոպեկ: Եթե գրած 50 ռուբլուց ավել եղավ՝ ավելացածի տողը հաշվելու են 2 կոպեկ:

Այս հաշիվն անում եմ նկատելով, որ 100 ռուբլուց պակասով Թիֆլիս ապրել չեմ կարող:

Կարծում եմ լավագույն պայմաններն են, որ կարող եմ առաջարկել:

Խնդրեմ քո ազդեցությունը բանեցնես և ստիպես, որ ինձ շուտով պատասխանեն, որովհետև, եթե այդ պայմանները չանցնեն, ես նորից պիտի ուսուցչության դիմեմ, իսկ դրա համար պետք է գոնե մի ամիս յամանակ ունենամ, որ պաշտոն փոխեմ:

Երկու աննման գործով ես պարապել չեմ կարող՝ գրել և ուսուցիչ լինել, կամ այս, կամ այն: Դրա համար է, որ 100 ուսուցիչ պակասով ես անհնար եմ համարում «Հորիզոնի» խմբագրության անդամ լինել:

Եթե բեզանից է կախված այս բաների կարգադրությունը, շտապիր մի արագ պատասխան տալ:

Բարևներ ձերոնց:

Քո՝ Նիկոլ

Հասցե. Целижан
Поча Мамаянна
М^{ме} Р. Мамиконян
Հանձնել ինձ

19

1912, հուլիս 21
Դիլիջան

Սիրելի Օհանես,

Մի տաս օր առաջ քեզ մի նամակ եմ գրել «Հորիզոնի» հասցեով, որ հուսամ ստացած լինես: Լսեցի անցել ևս Դսեղ, դրա համար այս նամակը գրում եմ դուզի հասցեով:

Ես խմբագրության գրել էի իմ պալմանները, տեսնելով, որ ինձ ոչինչ չեն դրում իմ ստանալիքի և անելիքի մասին իբր խմբագրության անդամ: Ուղե էի 100 ուսուցիչ ռոճիկ արև պալմանով, որ 50 ո. համարվի խմբագրական աշխատանքիս վարձ, իսկ 50 ո. պարտավորվիմ գրելու՝ տողը հաշվելով 3 կոպ., 50 ուսուցիչ ավել գրածիս համար առաջարկել էի տողին երկու (2) կոպ. վճարելու: Արշակից (Հարությունյան) մի պատասխան ստացա, որ ինձ կարող է հրավիրել 75 ո. ռոճիկով ու եթե ես համաձայն եմ՝ գրեմ իրան, և նա ինձ պաշտոնակա՛ն հրավեր ուղարկի: 75 ուսուցիչ չորս հոգի Թիֆլիս ապրել չեն կարող և ոչ մի կերպ. ես ուզում էի մերժում գրել, բայց Դերենեկը (որ այստեղ է) ինձ խորհուրդ տվեց նախքան ուրիշ գործ որոնելը գրել բեզ այս մասին, ասելով, որ խմբագրության մեջ դու կարևոր գեր ես խաղում: Ես էլ լսելով նրան՝ ահա վախիկ գրում եմ:

Ես անորոշության ձեռքից այնքան եմ տուժել, որ չեմ ուզում փորձածը կրկին փորձել՝ հիմա: Երբ չանելու համար ես կուգեմ, թե իմ անելիքը, և թե իմ ստանալիքը շատ արագ լինի, որ հանգիստ խղճով աշխատել կարողանամ. ևս շատ եմ վախենում, որ վերջո «Դուրծի» օրերը չգան ինձ համար, երբ տմենքը քաշվել էին ամառը, ու ես լցնում էի ամբողջ թերթը, որովհետև իմ անելիքը որոշ չէր: Ես առաջարկել էի Արշակին (իմա՝ «Հորիզոնին»), որ գրեմ առաջնորդողներ (առաջիմ քաղաքական, մինչև տեղական գործերի հետ ծանոթանում), գրախոսություններ, այնուհետև գրական հոդվածներ. խմբագրեմ արագի քանասիրական բաժինը և վերեմ այս առիթով եղած նախապաշտությունը: Հիմա ես խմբագրության:

Որովհետև իմ հրուժյան որոշումն էին համար շատ կարևոր է, քանի որ բնավորությանս մեջ չկա НА ВОСН Կործ տեսնել, ուստի խնդրում եմ այս մասին ինչ որ մտածում ես կամ կարող ես անել, շուտով գրիր ու արա և հետևանքի մասին ինձ հայտնիր:

Ամառն անցնում է. ուսուցչական տեղերը գրավվում են. եթե իմ պալմանները չընդունեն, որ շատ համեստ են մինչև զարմանալ Արշակա Հարու-

թյունյան ի Հորիզոնեն, այն ժամանակ ես ստիպված պիտի լինեմ նորից
դիմել ուսուցչության: Անշուշտ, ինձ համար ցանկալի է և եղել է գրական
ասպարեզը, բայց ոչ քաղցածության համար: Ես ինձ որևէ գործակալ-արից
վատ չեմ համարում: Համբույր,

բո՛ւնիկոյ

Բարև ձերոնց
Հասցես.

Делижан
Дача Мамянца
М^{ше} Р. Мамиконянь

Հանձնել ինձ.

ПИСЬМА НИКОЛА АГБАЛЯНА ОВАНЕСУ ТУМАНЯНУ

Дж. А. АВЕТЯН

Резюме

Литературовед-педагог Никол Агбальян (1873—1947)—один из крупнейших деятелей армянской критической мысли. Его дружба с Ованесом Туманяном зародилась в кружке армянских писателей «Вернатун». В 1902 г. Агбальян едет в Петербург, а позднее за границу для продолжения учебы. Его теплые, дружеские письма, адресованные отсюда Туманяну, содержат интересные сведения об общественной жизни того времени. Публикуемые письма хранятся в личном фонде Ов. Туманяна в Музее литературы и искусства им. Е. Чаренца.